ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. հոկտեմբերի 24-26-ը Ռուսաստանի Դաշնություն՝ քաղաք Մոսկվա կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**
Արման Խոջոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա 2021թ. հոկտեմբերի 24-26-ը

4. **Հրավիրող կողմը՝**
Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը՝**
Մասնակցություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ագրոարդյունաբերական համալիրի հարցերով խորհրդատվական կոմիտեի 24-րդ նիստին:

6. **Քննարկված թեմաները՝**

- Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական բույսերի սերմերի շրջանառության մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու նախագծի քննարկում,
- Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում սերմնաբուծության զարգացման համապարփակ ուսումնասիրություն կատարելու վերաբերյալ քննարկում
- 2021-2025 թթ. Եվրասիական տնտեսական միության շաքարի արդյունաբերության զարգացման ռազմավարական ուղղությունների մասին փաստաթղթի քննարկում
- Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում գյուղատնտեսության ոլորտում 2019-2021թթ. պետական աջակցության ծրագրերի ներկայացում

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

- Հանդիպում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի անդամ, արդյունաբերության և ագրոարդյունաբերական համալիրի հարցերով նախարար Արտակ Քամալյանի և Ագրոարդյունաբերական համալիրի հարցերով ղեկավար Արմեն Հարությունյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են 2022 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող «Ալկոհոլային արտադրանքի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգին առնչվող մի շարք հարցեր:
- Հանդիպում Ռուսաստանի Դաշնության գյուղատնտեսության նախարարի տեղակալ Մաքսիմ Ուվայդովի հետ: Քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում սերմարտադրության և դեպի ԵԱՏՄ անդամ պետություններ հնարավոր մատակարարման հետ կապված հարցեր: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել խաղողագործության ոլորտին, մասնավորապես խաղողի արժեշղթայի կարճաժամկետ և երկարաժամկետ քաղաքականության մշակման հարցերին, հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի գների կարգավորման նպատակով ռուսական փորձի ուսումնասիրությանը և դրա կիրառման հնարավորությանը՝ Հայաստանի Հանրապետությունում՝ որպես գնաճը զսպող մեխանիզմ:

  Կողմերը քննարկել են նաև Հայաստանի Հանրապետությունում կենդանական պատվաստանյութերի արտադրության, շշալցման և մատակարարման գործընթացների արդյունավետության բարձրացմանն առնչվող հարցեր:
- Հանդիպում Կոնյակ արտադրողների միության նախագահ Անատոլի Յաբլոնսկիի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են հայկական կոնյակի և կոնյակի սպիրտի՝ ՌԴ արտահանման համար բարենպաստ պայմանների ստեղծման և առկա խոչընդոտների վերացմանն առնչվող հարցեր:
- Հանդիպում ՌԴ անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայության ղեկավար Սերգեյ Դանկվերտի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են սերմերի ներմուծման միասնական համակարգի ձևավորման հնարավորությունները: Անդրադարձ է կատարվել նաև ԳՁՕ սերմերի ներմուծման և տարածման կանխարգելման համապատասխան մեխանիզմների մշակման աշխատանքների կազմակերպմանը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

28.10.2021թ.